ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ ՄԱՄՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

03.05.2017 11:24

Լրատվության հարգելի պատասխանատուներ,

Շնորհավորում եմ Մամուլի ազատության միջազգային օրվա առթիվ: Սա այն եզակի տոներից է, որը վերաբերում է ոչ միայն մասնագիտական համայնքին, այլև պետությանը, հասարակության բոլոր շերտերին: Մամուլի ազատության սանդղակն այն հիմնական ցուցիչն է, որը տվյալ երկրի ժողովրդավարության նշաձողն է համարվում:

Խոսքի ազատության հարգելի երաշխավորներ, մաղթում եմ մասնագիտական նորանոր հաջողություններ, ստեղծագործական մեծ ջիղ և հավատարիմ ընթերցողներ: Արդարության, ճշմարտության, անկողմնակալ լրատվությանը միտված ձեր գործունեության արդյունքում է հնարավոր տեսնել իրականությունը, շտկել սխալները և կանխել անթույլատրելին:

Վստահ եմ, որ հանդուրժողականությունն ու արդար մրցակցությունը բերելու է հասարակական ճիշտ կարծիքի ձևավորման՝ ի շահ լրատվության դաշտի իրավունքների պաշտպանության և սպառողների տեղեկատվություն ստանալու իրավունքի սպասարկման:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })